*Հաստատված է*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի*
*2015թ. մարտի 25-ի թիվ 79-Լ հրամանով*

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**
**պետական ոչ առևտրային կազմակերպություն**

# Հ Ր Ա Վ Ե Ր

Գնումների աջակցման կենտրոնի կողմից
Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով որպես հնարավոր մասնակից գրանցվելու

*Հարգելի մասնակից*

*Նախքան գրանցման հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման*

# **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Գնումների աջակցման կենտրոնի կողմից Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով որպես հնարավոր մասնակից գրանցվելու հրավերի


1. Գրանցման նպատակը
2. Ռուսերենով և անգլերենով հրավերի տրամադրման, այդ թվում՝ գանձվող վճարի չափի հաշվարկման կարգը
3. Հնարավոր մասնակիցների գրանցումը և շրջանակային համաձայնագրերի կնքումը
4. Շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգերին մասնակցության պայմանները

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն Գնումների աջակցման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Կենտրոն) կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների, պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ձևավորված միավորումների (միությունների), պետությունից կամ համայնքից կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց՝ նվիրաբերության կարգով ստացված միջոցների հաշվին կատարվող գնումների մասով և հանրային կազմակերպությունների (այսուհետև՝ Պատվիրատու) անունից և վերջիններիս հաշվին Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով, ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով անցկացվող շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգին գրանցվելու (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի գրանցվելու հայտը պատրաստելիս:

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Սույն հրավերը գործում է անժամկետ:

Գնումների աջակցման կենտրոնի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gak@armeps.am

**Armeps համակարգի հետ հարցեր և խնդիրներ առաջանալիս դիմել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝ 28-93-20)**

## 1. Գրանցման նպատակը

Սույն ընթացակարգով գրանցման առարկա է հանդիսանում N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) մասնակցելու նպատակով մասնակցի գրանցումը՝ որպես հնարավոր մասնակից:

Շրջանակային համաձայնագրի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 3 հավելվածում:

## 2. Ռուսերենով և անգլերենով հրավերի տրամադրման, այդ թվում՝ գանձվող վճարի չափի հաշվարկման կարգը

2.1 Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Կենտրոնին ներկայացվում է գրավոր դիմում: Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու մասին դիմումի հետ միասին ներկայացվում է նաև հրավեր տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը, եթե հայտարարությամբ փաստաթղթային ձևով հրավերի տրամադրման համար նախատեսված է վճար: Գումարի չափը նախատեսված է գնման հայտարարությամբ: Կենտրոնն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Ռուսերենով կամ անգլերենով հրավեր ստանալու համար Կենտրոնին ներկայացվում է գրավոր դիմում և ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը: Ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար գանձվող գումարի չափը սահմանված է գնումների հայտարարությամբ, որը չի կարող գերազանցել հրավերի թարգմանության, տպագրման և առաքման համար կատարվող ծախսերի չափը: Այդ դեպքում Կենտրոնն ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող տասս աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի և հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

## 3. Գրանցման հայտը ներկայացնելու կարգը և ժամկետները

3.1 Գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո, գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր Մասնակից գրանցվելու նպատակով, Կենտրոնին է ներկայացնում՝

1) գրավոր դիմում՝ հասցեագրված Կենտրոնի ղեկավարին (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը,

2) պետական գրանցման վկայականի՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը ներկայացնում է իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավաբանական անձի գրանցման համապատասխան փաստաթղթի նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով: Եթե մասնակիցը

ֆիզիկական անձ է, ապա ներկայացնում է անձնագրի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հավաստող փաստաթղթի նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով,

3) հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 2), որի չափը հավասար է գնումների բազային միավորին /մեկ միլիոն ՀՀ դրամ/:

Մասնակիցը կարող է դադարեցնել շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Կենտրոնին: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Կենտրոնը մասնակցի մասին տվյալները հեռացնում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակից:

3.2 Գրանցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Կենտրոնին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով:

3.3 Կենտրոնը պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված գրանցման հայտերի՝ որևէ կերպ վնասված ստանալու համար:

## 4. Հնարավոր մասնակիցների գրանցումը և շրջանակային համաձայնագրերի կնքումը

4.1 Մասնակիցները գրանցման հայտ կարող են ներկայացնել սույն հրավերով սահմանված կարգով:

4.2 Գրանցման հայտը գնահատում է քարտուղարը՝ հրավերով սահմանված կարգով:

4.3 Սահմանված կարգով կազմված գրանցման հայտը Կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը մասնակցի հետ կնքում է շրջանակային համաձայնագիր (Հավելված N 3) և այն կնքելուն հաջորդող աշխատանքային օրը հրապարակում է www.gnumner.am կայքում:

4.4 Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով մասնակիցը մուտք է գործում կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված գործարքի թիվը մուտքագրում է իր էջում և Կենտրոնին տրամադրում է (առձեռն կամ փոստով) հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտարարություն համակարգում գրանցվելու ցանկություն ունենալու և դրանից բխող քաղաքացիաիրավական պարտավորությունները և պատասխանատվությունն ընդունելու վերաբերյալ (Հավելված N Ա): Հայտարարության տեքստը տեղադրված է www.armeps.am կայքում, իսկ թղթային տարբերակը կենտրոնը տրամադրում է նման պահանջ ստանալու դեպքում՝ անմիջապես.

2) պետական գրանցման վկայականի՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավաբանական անձի գրանցման համապատասխան փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Գրանցման փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով.

3) անձնագրի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Անձը հավաստող փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով :

4.4.1 Շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային գնում կատարելու ընթացակարգի կիրառման դեպքում ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն Կենտրոնի հետ շրջանակային համաձայնագիր կնքած այն մասնակիցները, որոնք ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգին համապատասխան գրանցվել են էլեկտրոնային գնումների Արմեպս համակարգում և Կենտրոն են ներկայացրել դիմում՝ իրենց տվյալ էլեկտրոնային շրջանակային համաձայնագրին կցելու մասին (Հավելված N Բ): Կենտրոնը նման դիմում ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում մասնակցին էլեկտրոնային գնումների Արմեպս համակարգում կցում է էլեկտրոնային շրջանակային ընթացակարգին:

4.5 Սույն հրավերի 4.4 կետով սահմանված փաստաթղթերն ստալանու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը հաստատում է մասնակցի գրանցումը Համակարգում:

4.6 Համակարգում մասնակիցներին գրանցելուց հետո համակարգն էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուրին տեղեկացնում է իր անձը համակարգում հաստատող գործարքի թվի մասին: Գրանցված մասնակիցները 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է մուտք գործեն Համակարգ և մուտքագրեն էլեկտրոնային ուղերձ-նամակով ստացված գործարքի թիվը, հակառակ դեպքում համակարգում վերջիններիս գրանցումը կհամարվի անվավեր և կպահանջվի նոր գրանցում:

## 5. Շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգերին մասնակցության պայմանները

Պատվիրատուների կողմից կազմակերպվող շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգերին մասնակցելու հայտերը պետք է ներկայացվեն պատվիրատուների կողմից հաստատված և մասնակիցներին տրամադրված հրավերներին համապատասխան:

*Հավելված 1*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
***«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին***

# ԴԻՄՈՒՄ
# «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է սույն ընթացակարգին մասնակցության դիմում:

Կից ներկայացվում է՝ ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Ներկայացվող փաստաթղթի անվանումը

---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------,

-------------------------------------------------------------------------------------------------------------------------ի հայտի ապահովումը (Հավելված N 2)

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

-------------------------------------------------------------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

-----------------------------------------------------------------------------------------------------------------------: Հեռ. -----------------------------------------------------------------------------

Ընթացակարգի մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

Առդիր՝-------------- թերթ:

---------------------------------------------------------------------------------------------- ----------------------------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անունը Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ

«---------» ------------------ 20-----թ.

*Հավելված 2*

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23**

ք. Երևան «_____» ______________ 20___թ.

______________________________________-ն, ի դեմս Ընկերության ______________________________________
***Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*** ***(Մասնակցի ղեկավարի պաշտոնը)***

___________________________________________________-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության
***(Անուն Ազգանունը, անձնագրային տվյալները)***

հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

**1. *Համաձայնության առարկան***

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կենտրոն) կողմից կազմակերպված՝ «Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման» ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի հայտի ապահովում, ուստի սույն ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով Կենտրոնին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2 Ընկերության կողմից սույն ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կենտրոնը սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3 Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Կենտրոնը Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է Կենտրոնի կողմից ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի հրավերի վավերականության ընթացքում:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընկերության անվանումը

Ընկերության հասցեն

Ընկերության բանկի անվանումը,

Ընկերության Հ/Հ

Ընկերության ՀՎՀՀ

տնօրեն՝ --------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ -----------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**<br>*(մասնակցության հայտի ապահովում)* | |
| 2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. | |
| 3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ | |
| 4. Վճարողի բանկը՝ | |
| 5. Վճարողի հաշվի համարը՝ | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ՝ | |
| 7. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 8. Շահառու՝ «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ՝ 00063418 | |
| 10. Շահառուի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի Արաբկիրի մ/ճ | |
| 11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 163058100971 | |
| 12. Գումարը թվերով և բառերով՝ | |
| 13. Արժույթը (բառերով և կոդով)՝ | |
| 14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ | |
| 15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը | 17. կից՝--- էջ |
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝<br>/___________________/<br>/___________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա.<br>Վճարողի ստորագրությունները՝<br>/___________________/<br>/___________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /___________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/___________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

---

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր | լրացվում է վճարողի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | կողմից |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | գնման ընթացակարգի ծածկագիրը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին | լրացվում է շահառուիկողմից |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է վճարողի կողմից |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր | |
| 20.բ. | շահառուին | պարտադիր | չի լրացվում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | | | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |

*Հավելված 3*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

# ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-15/23

ք. Երևան «____» __________ 20___թ.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, գործելով Պատվիրատուների անունից, ի դեմս Կազմակերպության պետ ______________________________________________________, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կենտրոն), մի կողմից և «____________________________» -ն, ի դեմս Ընկերության տնօրեն ____________________________, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. *Համաձայնագրի առարկան*

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Կատարողը մասնակցել է Կենտրոնի կողմից Ցուցանակների և գովազդային վահանակների պատրաստման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23 ծածկագրով կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Կատարողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Կատարողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Կատարողը պարտավոր է Կենտրոնի կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացում վերջինիս «Հայէկոնոմբանկ» Արաբկիր մ/ճ N 163058100971 հ/հ-ին վճարել հայտի ապահովման չափով գումար:

1.5 Կատարողը կարող է դադարեցնել շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Կենտրոնին: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Կենտրոնը Կատարողի մասին տվյալները հեռացնում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակից:

## 2. Կողմերի պատասխանատվությունը

Սույն համաձայնագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 3. **Այլ պայմաններ**

3.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2 Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Կատարողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն համաձայնագրի փոփոխություն չի կնքվում: Կատարողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Կենտրոնին:

3.3 Սույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## **4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները**

| **Կ Ե Ն Տ Ր Ո Ն** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ք. Երևան, Կոմիտասի պող. 54բ | |
| «Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ | |
| Հ/Հ 163058561289 | |
| էլ. հասցեն՝ | էլ. հասցեն՝ |
| --------------------------------- | --------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված Ա*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

------------------------------------------------------------ -ն հայտարարում է, որ ցանկություն ունի
Մասնակցի անվանումը (անունը)

գրանցվելու ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգի www.armeps.am կայքում որպես տնտեսական օպերատոր (գնման գործընթացներում հնարավոր մասնակից):

Միաժամանակ ------------------------------------------------------------ -ն հայտնում և հավաստում է, որ
Մասնակցի անվանումը (անունը)

ծանոթացել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև ընդունում է դրանից բխող քաղաքացիաիրավական պարտավորությունները և պատասխանատվություն է կրում www.armeps.am կայքում իր գրանցման հասցեից կատարվող բոլոր գործողությունների (անգործության) համար:

| | |
|---|---|
| ------------------------------------------------------------ | ---------------------------------------------- |
| Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) | (ստորագրությունը) |

Կ. Տ.

«--------» ------------------ 20----թ.

*<u>* Ծանոթություն Մասնակիցը ներկայացնում է՝</u>*

*1) պետական գրանցման վկայականի՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավաբանական անձի գրանցման համապատասխան փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Գրանցման փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով.*

*2) անձնագրի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Անձը հավաստող փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:*

*Հավելված Բ*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/23» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին*

______________________________________
Մասնակցի անվանումը (անունը)

______________________________________-*ից*

**ԴԻՄՈՒՄ**

Հայտնում եմ Ձեզ, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքել եմ շրջանակային համաձայնագիր (համաձայնագրեր) և գրանցվել եմ էլեկտրոնային գնումների Արմեպս (Armeps) համակարգում: Խնդրում եմ ինձ էլեկտրոնային գնումների համակարգում կցել ______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

Նշել ծածկագրերը

ծածկագրով (ծածկագրերով) շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգին (ընթացակարգերին), որպես հնարավոր մասնակից:

------------------------------------------------------------ ------------------------------
(Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հեռ. ------------------------------------------------------------ «______» ____________ 20___թ.